ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 թ.
№ 20 (1136)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Իրադարձային օր Մանկավարժականում

Բացվեց Հունգարական կենտրոն

Մանկավարժական համալսարանի 402 լսարանում բացվեց Հունգարական մշակույթի և լեզվի կենտրոն: Այդ առիթով Մանկավարժականում էին ՀՀ ԿԳՄՍ նախարար, ՀՊՄՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանը, Հունգարիայում ՀՀ դեսպան Աշոտ Սմբատյանը, ՀՀ-ում Հունգարիայի դեսպան Աննա Մարիա Շիկոն, Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի պատվիրակությունը:

ՀՊՄՀ Պատմության և հասարակության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը օրը պատմական համարեց ոչ միայն ֆակուլտետի համար, այլև հայ-հունգարական հարաբերությունների պատմության համար, քանզի «այսօր բացվում է նոր էջ, որի առաջին տողերը գրվեցին 2016 թվականին, երբ Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանում բացվեց հայագիտության ամբիոն: Հարաբերությունները երկու երկրների միջև զարգացան, և մեր համալսարանն, անշուշտ, իր մեծ դերն ունեցավ այդ գործում»:

Դեկանը փաստեց՝ այսպիսով հայ-հունգարական հարաբերությունները նոր որակ են ամրագրում և հարաբերությունների նոր մակարդակ՝ հիմնված երկու երկրների դարավոր պատմության վրա: Այդ էր վկայում նաև համալսարանի չորրորդ հարկի ցուցասրահում բացված ցուցադրությունը, որտեղ ներկայացված էին Հունգարիայում և Հայաստանում ստեղծված հայ-հունգարական համագործակցությունն արտացոլող 19-20-րդ դարերի գրականություն, նաև նորաստեղծ գրքեր, հայերեն գրքերի հունգարերեն թարգմանություններ: Է. Հովհաննիսյանը ներկայացրեց նաև Հայաստանում երկու կիսամյակ ուսանած հունգար ուսանողների, որոնք արդեն ասպիրանտներ են և ապագա հայագետներ, հոդվածների ժողովածուն Հայաստանի պատմության մասին:

«Համալսարանում բացվող Հունգարիայի պատմության ու մշակույթի կենտրոնը նոր երանգ է հաղորդելու Հայաստանում Հունգարիայի պատմության, մշակույթի և լեզվի նկատմամբ հետաքրքրությանը»,-ասաց դեկանը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը: Ռեկտորը փաստեց՝ 2024 թվականին Հունգարիայի արտաքին գործերի նախարարության և Մանկավարժական համալսարանի միջև կնքված պայմանագրի շրջանակում կբացվի Հունգարագիտության կենտրոն: Դեռևս 2016 թվականին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական համալսարանի և Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի միջև ստեղծված կապի շարունակական զարգացումների գործընթացի արդյունքում Պիտեր Պազմանի համալսարանում ստեղծվեց եզակի հայագիտական կենտրոն, եզակի բակալավրական և մագիստրոսական ծրագրերով ուսանում են շուրջ 40 ուսանողներ: Ամբիոնը ղեկավարելու է Պիտեր Պազմանի համալսարանի շրջանավարտը, որի նախաձեռնությամբ արդեն համալսարանի 10 ուսանող ուսանում է այստեղ հունգարերեն, ծանոթանում հայ մշակույթի փոխներգործությանը:

Ռեկտորը լիահույս է՝ կենտրոնի բացումն իրապես կնպաստի ինչպես պատմական կրթական մշակույթներին,

➢2

Մշակութային փառատոնի երեք օրը

Մանկավարժական համալսարանի Ուսանողական խորհրդի ավանդական մեծ նախաձեռնություններից մեկը «Նռնենի» փառատոնն է, որն այս անգամ մեկնարկեց դեկտեմբերի 2-ին: Այն նպատակ ուներ բացահայտել ուսանող երիտասարդության ստեղծագործական ներուժը:

Եռօրյա ծրագրով անցկացվող փառատոնի առաջին օրը նվիրված էր երգի մրցույթին: Այն վարում էին ՀՊՄՀ Ուսանողական խորհրդից Կարինե Ավալյանը և Գոռ Ավալյանը:

Մասնակիցներին շնորհավորեցին ՀՊՄՀ պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը և ՈՒԽ նախագահ Պարույր Գալստյանը, իսկ փառատոնի մուտքը բացեց Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի փողային նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար, դոցենտ Կոլյա Մարտիրոսյանի դիրիժորությամբ:

Պրոռեկտորը շնորհավորեց բոլորին միջհամալսարանական մշակութային մրցույթի անցկացման առթիվ՝ ասելով. «Մենք ունենք շատ հին մշակույթ և աշխարհին ներկայանում ենք մեր մշակույթով. մշակույթը մեր գեների մեջ է, մշակույթը պայմանավորում է մեր ինքնությունը, մեր ով լինելը, մեր արմատները»:

Մերօրյա թվայնացված աշխարհում Մարիաննա Հարությունյանը կարևորեց ստեղծագործական մտածելակերպի դերը, նաև փաստեց՝ որևէ արհեստական բանականություն չի կարող փոխարինել մարդու ստեղծագործությանը:

Պրոռեկտորը մաղթեց մասնակիցներին՝ դառնալ մշակույթի դեսպաններ ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրում:

Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանն էլ շնորհակալություն հայտնեց ուսանողական կառույցներին՝ միջոցառմանն աջակցելու և պատրաստակամության համար:

Երգի մրցույթին մասնակցում էին Հայաստանի ագրարային, Երևանի Մ. Հերացու անվան բժշկական, Հայաստանի եվրոպական, Վ. Բրյուսովի անվան պետական, Հայ-ռուսական (Սլավոնական), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Երևանի պետական, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանների, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ուսանողներ:

Մրցութային ժյուրին մրցանակային տեղերը դժվարությամբ որոշեց. լավագույնները շատ էին: 3-րդ մրցանակային տեղին արժանացավ Մանկավարժական համալսարանի ուսանողուհի

➢2

Կրթությունը քաղաքակրթության փոխանցումն է:

Արիել Դյուրանտ

Բացվեց Հունգարական կենտրոն

➢1 այնպես էլ հայ-հունգարական ժողովուրդների բարեկամությանը:

Ելույթ ունեցավ ԿԳՄՍ նախարար, ՀՊՄՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ժաննա Անդրեսյանը: Նա ջերմորեն շնորհավորեց բոլորին՝ ասելով, որ սա այն դեպքն է, երբ կենտրոնի բացումը ոչ թե նախորդում է բուն գործընթացին, այլ հաջորդում է՝ հանդիսանալով դրա բնականոն զարգացման արդյունքը:

«Արդեն ունենք ուսանողներ, որոնք այս կենտրոնի շահառուներն են, և ունենք սկսված բովանդակային գործընթաց, որը նպաստելու է երկու բուհերի միջև համագործակցության ամրապնդմանը և այդպիսով նաև իր նպաստն է բերելու երկու երկրների միջև հարաբերությունների խորացմանն ու զարգացմանը»:

Նախարարը կարևորեց այն փաստը, որ հանրապետության համալսարանները խորացնում են այդ համագործակցությունը արտերկրի գործընկերների հետ՝ մատնանշելով համատեղ հրապարակումներն ու հետազոտությունները, որոնք արդեն իսկ գիտական ու հետազոտական արդյունքն են գրանցում:

Նախարարը վստահեցրեց՝ հետաքրքրված ուսանողներին կցուցաբերվի պետական աջակցություն, ապա ամփոփեց՝ որքան լավ ես ուսումնասիրում այլ երկրների պատմությունը, այնքան լավ ես ճանաչում ինքդ քեզ:

Հունգարական կենտրոնի բացման ժապավենը կտրեցին ՀՊՄՀ-ի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը և Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի պրոռեկտոր Քրիստիան Վինցեն:

Հունգարական կենտրոնի բացմանն իրենց նպաստն են բերել նաև ՀՀ-ում Հունգարիայի արտակարգ և լիազոր դեսպան Աննա Մարիա Շիկոն և Հունգարիայում ՀՀ դեսպան Աշոտ Սմբատյանը:

Դեսպան Աննա Մարիա Շիկոն կարևորեց Հունգարիայի կենտրոնի բացման անհրաժեշտությունը՝ վստահեցնելով Հայաստանը և Հունգարիան կշարունակեն իրենց դարավոր բարեկամությունը:

Հունգարիայում ՀՀ դեսպան Աշոտ Սմբատյանն էլ փաստեց՝ Հայաստանի և Հունգարիայի միջև դիվանագիտական հարաբերությունների վերականգնումից քիչ ժամանակ է անցել, սակայն այս ընթացքում իրագործվել են մի շարք ծրագրեր, որոնք սնում են այդ հարաբերությունները: Դեսպանի դիտարկմամբ, առանց երկու երկրների միջև գիտակրթական, մշակութային կապերի, քաղաքական հարաբերություններն աղքատ կլինեն. այդ համատեքստում նա ընդգծեց կենտրոնի բացումը:

Հունգարական կենտրոնի բացմանը ելույթ ունեցան նաև Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի պրոռեկտոր Քրիստիան Վինցենը և Հունգարիայի կաթոլիկ համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, դոկտոր Բալինտ Կովաչը:

Նրանք վստահ են՝ կենտրոնը կօգնի ճանաչել հունգարական մշակույթը, կրթություն ստանալ Հունգարիայում, ծավալել համատեղ գիտական գործունեություն և սովորել հունգարերեն:

Մշակութային փառատոնի երեք օրը

➢1 Հելեն Տեր-Գևորգյանը՝ «Գութան» երգի կատարմամբ, 2-րդ տեղում Եվրոպական համալսարանի ուսանողուհի Լաուրա Զարգարյանն էր. նա կատարեց «Ճանապարհ» երգը, իսկ 1-ին տեղը ժյուրին բաշխեց երկու մասնակցի միջև, որոնցից մեկը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ուսանող Գինո Մաքսիմն էր՝ Ֆորշի հանրահայտ «Սեր իմ» երգի կատարմամբ, մյուսը՝ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի ուսանող Ամալյա Քանարյանը՝ «Սիրո երկու թևեր» երգի կատարմամբ:

Փառատոնի երկրորդ օրն անցկացվեց ասմունքի մրցույթ, իսկ հաջորդ օրն ամփոփվեց պարային կատարումներով և հաղթողների պարգևատրման հանդիսավոր արարողությամբ:

Ասմունքի մրցույթում 3-րդ տեղը զբաղեցրեց ԵՊՀ-ի ուսանող Հրաչ Խալաթյանը, 2-րդ տեղում Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ուսանող Անահիտ Գրիգորյանն էր, իսկ 1-ին պատվավոր հորիզոնականում՝ ՀՊՄՀ ուսանող Մանանա Մնեյանը:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը ողջունեց մասնակիցներին և ասաց, որ սիրով հարթակ են տրամադրում ուսանողական համայնքին՝ կարևորելով ուսանողական փոխշփումները:

Ռեկտորի կարծիքով՝ մշակույթն է այն հենասյունը, որի վրա ձևավորվում է յուրաքանչյուրի ինքնության բաղադրիչը:

«Նռնենի» փառատոնը կարևորեց նաև Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը՝ ընդգծելով՝ 30-ամյա ուսանողական կառույցը նման միջոցառումներով պահպանում է ստեղծված ավանդույթները՝ իր շուրջը համախմբելով երիտասարդներին:

Մրցույթի ամփոփիչ օրը հայտնի դարձան նաև պարի ժանրում հաղթող մասնակիցները. ժյուրին գնահատելով պարի տեխնիկան, հագուստի դիզայնն ու արտահայտչականությունը՝ 3-րդ տեղը հանձնեց Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ուսանողներ Նորայր Համբարձումյանին և Մանե Հայրապետյանին, 2-րդ տեղում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանող Անժելիկա Տոնոյանն էր, իսկ 1-ին պատվավոր հորիզոնականը զբաղեցրեց ՀՊՄՀ ուսանող Քրիստինա Մանուկյանը:

Երեք օր մշակութային փառատոնը համախմբել էր 11 ուսումնական հաստատությունների տաղանդավոր ուսանողների: Հաղթողներին պարգևներ և շնորհակալագրեր հանձնեց Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը՝ շնորհավորելով ուսանողական կառույցների երեք տասնամյա գործունեության առթիվ:

Բաց դռների օր Բանասիրականում

Մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետում դեկտեմբերի 10-ին բաց դռների օր էր: Ֆակուլտետում հյուրընկալել էին Երևանի և մարզերի հանրակրթական դպրոցների 15 ուսուցչի և ավագ դասարանների սովորողների: Ուսուցիչները Մանկավարժական համալսարանի և այլ բուհերի շրջանավարտներ էին, հիմնականում երիտասարդ մասնագետներ:

Հանդիպման բնույթը յուրահատուկ էր, մասնագիտական կողմնորոշման ոչ սովորական ձևաչափի մեջ ֆակուլտետի դեկանն ու ամբիոնների վարիչները հանդես եկան վարպետության դաս-դասախոսություններով:

Դեկան Աշոտ Գալստյանը փաստեց՝ ֆակուլտետն ուսանողի խնդիր չունի, բայց երկուստեք կարևորեց նման հանդիպումները և ընդգծեց՝ ֆա-

կուլտետի մասնագիտական ամբիոնները եզակի գիտական կենտրոններ են, որոնք ղեկավարում են հանրապետությունում ճանաչում ու համբավ ունեցող անհատականություններ: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը պարբերաբար կազմակերպում է այցելություններ Երևանի ու մարզերի տարբեր դպրոցներ՝ աջակցում սովորողներին մասնագիտական ճիշտ ընտրության հարցում:

«Աշխարհն անընդհատ փոփոխվում է, փոխվում են նաև ուսուցչին ներկայացվող պահանջներն ու ուսուցման մեթոդները»,-ասաց Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանը: Պրոֆեսորը վարպետության հիանալի դաս անցկացրեց ուսուցիչների համար՝ «Ինչպես ուսուցանել պատմավեպերը» թեմայով՝ ուսուցիչներին հորդորելով չբավարարվել դասագրքի նյութերով և պատմական տարբեր աղբյուրներ իմանալ:

Ա. Ղարիբյանի անվան Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Վազգեն Համբարձումյանը շեշտադրեց՝ ըստ համեմատական լեզվաբանության պատմության՝ հայերենը 5000 տարվա պատմություն ունի: Նա խոսեց հայերենի բառապաշարի հավաքագրման ու բառարանագրության մասին՝ առանձին-առանձին անդրադառնալով հայերենի հայտնի բառարանագիրներին ու բառարաններին՝ վերջիններս համարելով տվյալ ժողովրդի պատմության գանձարանն ու ամբարը:

Պրոֆեսորը հույս հայտնեց, որ նոր սերունդը կզբաղվի բառարանագրությամբ, քանզի հայերենի հարուստ բառապաշարը կբավարարի կազմել մինչև 15 հատորից բաղկացած նոր բառարաններ:

Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Սուրեն Դանիելյանն ընդգծեց՝ նոր սերունդ՝ գիտական ճանաչողության նոր մոտեցումներ:

Պրոֆեսորն անդրադարձավ արևմտահայերենի մի շարք ցավոտ հարցադրումների՝ հռետորական հարցով դիմելով ուսուցիչներին՝ արդյո՞ք նրանց գեղարվեստական մտածողության մեջ բավարար է արևմտահայերենի հանդեպ վերաբերմունքը, միա-

ժամանակ տալով պատասխանը՝ արևմտահայերենի նկատմամբ մեր վերաբերմունքը դեռևս անբավարար է, և, ցավոք, պատմության առաջ ոչ մի արդարացում չունենք:

Պրոֆեսոր Գայանե Խալաթյանը ուսուցիչների համար ընդարձակ դասախոսությամբ հանդես եկավ՝ ինչպես տարբերել տարարժեք խոսքի մասերը, իսկ դեկան Աշոտ Գալստյանը ներկայացրեց «Էսսեն որպես չափորոշչային պահանջ»:

Վարպետության դասերն ուղեկցվեցին նաև սովորողներին տրված թեստային առաջադրանքերով, որոնք գիտելիքների արժևորման համատեքստում հետաքրքիր ու հավուր պատշաճի կազմակերպվեցին:

Դասախոսները պատասխանեցին ուսուցիչների հետաքրքրող հարցերին՝ վստահեցնելով՝ նման հանդիպումները շարունակական կլինեն:

Միլվա ԱՍՐՅԱՆ



Քննարկեցին կենսաբազմազանության արդի հիմնախնդիրները

ՀՊՄՀ Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ կայացավ «Կենսաբազմազանության արդի հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» ուսանողական գիտագործնական գիտաժողով:

Հիշեցնենք՝ Հայաստանը 2026 թվականին հյուրընկալելու է Կենսաբազմազանության կողմերի համաժողովը՝ COP17-ը, որ միտված է գլոբալ կենսաբազմազանության պաշտպանությանն ու կարևոր ուղենիշ է բնական ռեսուրսների կայուն օգտագործման ուղղությամբ:

Գիտաժողովին ներկա էին ոլորտի մասնագետներ, դասախոսներ, ուսուցիչներ, ուսանողներ, նաև դպրոցականներ:

Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Սամվել Պիպոյանը նշեց՝ Հայաստանում Մանկավարժականը միակ բուհն է, որի նախաձեռնությամբ առաջին անգամ անցկացվում է կենսաբազմազանությանը նվիրված գիտական ձեռնարկ:

«Կենսաբազմազանության արդի հիմնախնդիրներ» դասընթացը ներառված է կենսաբան-մագիստրոսների ուսումնառության գործընթացում. համաժողովին ընդառաջ անցկացվող գիտաժողովն էլ միտված է լրացնելու էկոլոգիական կրթության և դաստիարակության մասով բացն ու հասարակությանը ներկայացնել աշխարհում և Հայատանում տեղի ունեցող գործընթացները, հիմնախնդիրները:

Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը կարևորեց ուսանողական ձեռնարկն ու վստահեցրեց՝ երիտասարդ հետազոտողներից ևս շատ բան ունեն սովորելու. սա է զարգացման ճանապարհը: Նա կարևորեց նաև բուհ-դպրոց համագործակցությունն ու նկատեց՝ այսօր, ավելի քան երբևէ, մեր երկրին անհրաժեշտ է ուժեղ դպրոց և կայացած կրթական համակարգ. այդ համատեքստում Մանկավարժական համալսարանի դերն ու գործունեությունն ահռելի է. «Վստահեցնում եմ՝ այս ձևաչափով հանդիպումները կլինեն շարունակական. ուսանողական գիտաժողովները պետք է լինեն քննարկումների կարևոր հարթակ: Եղեք նախաձեռնող և ձեր մասնակցությունն ունեցեք գիտության զարգացման կարևորագույն գործում. այդ առումով կարևոր է նաև մասնակցությունը Կենսաբազմազանության կողմերի համաժողովին»,- նշեց պրոռեկտորը: Նա հույս հայտնեց, որ հետազոտական ուղղությունը զարգացնելու առումով բուհի ձեռնարկած քայլերը կտան դրական արդյունք:

Ուսանողական գիտագործնական գիտաժողովի մասնակիցներն իրենց զեկույցներում անդրադարձան «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիային ու բնության պահպանության գործում նրա նշանակությանը, պահպանության հիմնական սկզբունքներին և խնդիրներին, ժամանակակից կենսաբազմազանության վրա ազդող բնական ու մարդածին գործոններին, ՀՀ-ում դրա պահպանության հիմնախնդիրներին: Բացի այդ, ապագա կենսաբանները ներկայացրին սեփական հետազոտությունները՝ էկոհամակարգերի և տեսակային բազմազանության փոխազդեցության, Սևանա լճին և նրա պահպանության հիմնախնդիրների, Հայաստանի բույսերի բազմազանության վրա ազդող գործոնների, շրջակա միջավայրի աղտոտման, կլիմայական գլոբալ փոփոխությունների ազդեցություններին և այլն: Ներկայացվեց նաև էկոլոգիական կրթության դերը կենսաբազմազանության պահպանման գործում:

Բանախոսներն ընդգծեցին՝ ՀՀ-ում կենսաբազմազանությունը կանգնած է լուրջ խնդիրների առջև. նրանք կարևորեցին կանխարգելման և խնդիրների լուծմանը միտված գործընթացները, ինչպես նաև նշեցին՝ նրա կարևոր դերակատարումն ու ապագա սերունդներին կենսական նշանակություն ունեցող ռեսուրսներից և բնական միջավայրից չզրկելու համար գործընթացին մասնակցությունը:

Ամփոփելով գիտաժողովը՝ պրոֆեսոր Պիպոյանը նշեց՝ չնայած տասնամյակներ շարունակ գործող օրենքի, ցավոք, մեր երկրում այսօր էլ էկոկրթությունը պատշաճ մակարդակով չի իրականացվում: Հուսով է՝ գիտաժողովը կավելացնի շրջակա միջավայրի վերաբերյալ ուսանողների և աշակերտների գիտելիքները, իսկ ապագա ուսուցիչները, կարևորելով այդ խնդիրների վերհանումը, դրանց կանդրադառնան նաև դասավանդման գործընթացում:

Ծավալվեց շահագրգիռ քննարկում, մասնակիցներին տրվեցին հավաստագրեր:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ - ԴՊՐՈՑ

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ՄԻՐՈ ԵՎ ԿԱՐՈՏԻ

Մելանյա Գեղամյան. կին, բանական արարած, որ, ինչպես ինքն է գրում, «ապրում է մտոք, տոհմիկ դաստիարակության ավանդույթներով, հոգեկուլ ախտերից և մոլորություններից հեռու»:

Ավետիսյան դպրոցի տնօրենին բացահայտում եմ առաջին իսկ հայացքից. առինքնող կեցվածքով, հետաքրքիր ու հարուստ ներաշխարհով Մելանյա Գեղամյանը կրթության գործի նվիրյալ է, ով Ավետիսյան դպրոցին հոգի ու շունչ է տալիս: Բարեգործական հիմունքներով աշխատող այս դպրոցում ամեն օր լույսի տոն է՝ լուսավոր ու մաքրամաքուր, ներքին կարգ ու կանոնով, համեստ ու ճաշակով կահավորված դպրոցը փայլում է նաև արտաքին դիզայնով ու գրավում բոլորին:

Մելանյա Գեղամյանին բացահայտում եմ նաև նրա հեղինակած «Սեր իմ Արցախ» բանաստեղծությունների գրքով. «Ով էլ լինես՝ ինձ արյունակից հարազատ, բարեկամ, ծանոթ կամ նույնիսկ՝ անծանոթ, հոգուս ակութից փրկված այս տողերը քեզ համար են: Ինչքան էլ այրվել-մոխրացել են իմ էության կրակարաններում, ինչքան էլ խեղվել կյանքիս կեռմաններում, զանազան վայրիվերումներում...»:

Բանաստեղծությունների այս գրքում Մելանյան ամբողջ «խորքով ու լայնքով» զգում է հայրենիքը, Արցախի կորուստն ու Եռաբլուրը նրան հանգիստ չեն տալիս՝ ամեն օր ու ամեն ժամ քրքրելով հիշողությունները, իսկ պատմությունն ու հերոսների արյունով գծված սահմանները հորդորում են՝ հիշել, հիշել, հիշել...

Հիրավի իրավացի էր Պարույր Սևակը, երբ գրում էր. «Մենք պարտավոր ենք շահել շախմատային մեր այն խաղը, որ սկսել ենք ոչ թե մենք, այլ Մեսրոպ Մաշտոցը...»:

Մենք արժանապատիվ հայ ենք և քաղաքակրթությանը շատ բան տված ազգ: Բայց ահա անընդհատ ուշանում ենք «պատմության գնացքից»:

Արցախ աշխարհը Մելանյա Գեղամյանին ներկայանում է որպես՝ «օտարի ճամփին ընկած քնքուշ ծաղիկ՝ ոտնակոխ եղած ու տանջված, հոգու մեջ՝ ցավ ու կսկիծ»:

Որքան հավատ ու հույս կա տողերում, լավի սպասում, ռուս-թուրքի խաղին չվստահելու հորդոր... Տիկին Մելանյայի բանաստեղծական տողերն ընթերցողին ակամա հետ են տանում, տեղափոխում հայ ժողովրդի համար մի ծանր ժամանակահատված, երբ Ավարայրից ու Սարդարապատից էլ ավելի օրհասական, կյանքի ու մահու պատերազմում ապավինել էինք հայ զինվորի ոգուն ու ժողովրդի «հոգու հեղեղին».

Էլ խաչվել չկա, ոչ էլ երկնչել,
Քանզի թշնամին մեզ շատ է խաչել...

Պայքարի ու նոր կորովի փնտրտուքում հեղինակը հստակ բանաձևում է հայ ժողովրդի կենսաձևը.

Աղ ու հացով ենք խոսել, արարվել...
Բայց հարատևում ենք «գրչով ու սրով»,
քանզի՝
Մեկ հարյուրամյակ հոշոտում են քեզ,
Դեռ կհոշոտեն այդպես անխնա,
Քանզի ուզում են շքյատա երգես,
Ու հորովելդ ջնջվի, վերանա...

Ցավի ու տառապանքի 150 էջ, ուր հեղինակը արթնության կոչ է հնչեցնում,

հորդորում չլռել ու չծնկել, դիմանալ, պայքարել, երբեմն էլ հույսը դառնում է միակ հենարանը.

Էլ չեմ հավատում ոչ մի երազի,
Ամեն ինչ սուտ է ու բռնադատված,
Ինձ մնացել է լոկ կանթեղ հույսի,
Կորցրած Հայրենիք, Հայրենիք ձևված...

Մորթված ու խաչված մի ժողովրդի ճակատագիր պատմության քառուղիներում, որից դասեր այդպես էլ չենք քաղում, մինչդեռ պետք է. «Միաբան լինենք ու ելքը գտնենք նոր ճանապարհին»:

Թևաթափ եղած հեղինակը զուր արդարություն է փնտրում, աշխարհի բոլոր ծագերն անհաղորդ են մեր ցավին, անգամ մեր դաշնակիցը, ու ինչ է մնում անել, եթե ոչ զրուցել պոետի հետ.

Արթնացի՛ր Չարե՛նց, պոե՛տ բոցաշունչ,
Ամբոխներիդ խենթ, հլու, հնազանդ
Անկուշտն է իշխում...

Որքան դիպուկ է գրել Սիամանթոն. «Մեռելներն անոնք են, որոնց համար մենք մեռանք»...

Ո՛չ, հերոսներին երբեք մահ չկա,
Եվ վախճան չկա կյանքին առհավետ...

Այսպես է մտածում ու գրում Մելանյա Գեղամյանը, ում հոգին ծվատվում է վշտից, ով հազար անգամ անցել է ցավի խորխորատներով ու ցավը դարձրել բանաստեղծություն, դարձրել կարոտ ու սեր՝ Արցախ աշխարհին ուղղված.

Դու անուն չես սոսկ երգելու համար,
Դու հող ես, լեռ ես, երկինք ես, օդ ես,
Անտառ ես կանգուն ու այգի դալար,
Դու սրտերի մեջ սեր ու կարոտ ես:

Գիրքը եզրափակվում է արձակ էջերով՝ հեղինակի մտորումներով, մտածումներով ու խոհերով՝ անցյալի միջով դեպի ներկա, հայրենադարձություն երևույթի չհասկացվածության ու թյուր մեկնաբանումի տխրությամբ, որի ներքո շղարշվում են ձգտումն ու կարոտն առ Հայրենիք...

Մելանյա Գեղամյանի գիրքը ցավի ու կորուստների, սիրո ու կարոտի անվերջ ուխտագնացություն է՝ մեր խաչը արժանապատվորեն կրելու, պատմության թմբիրից դուրս գալու և միաբանվելու հարատև կոչ:

«Հայ կրթություն» կրթական հիմնադրամի Խորեն և Շուշանիկ Ավետիսյան դպրոց և համայնքային կենտրոնի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մելանյա Գեղամյանը հավատում է հայ ժողովրդի, հայ մարդու հոգու վերածննդին ու կորցրած Հայրենիքի վերադարձին՝ իր ապրած ամեն օրը դարձնելով հայ երեխայի կրթության գործին նվիրումի տուրք:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Նոր հայացք մշակութային ժառանգությանը

Մեր նախագծային աշխատանքի համար որոշեցինք ուսումնասիրել հայ միջնադարյան մեծ պոետ Ֆրիկի կյանքը և ստեղծագործությունը: Չլինելով հոգևորական՝ Ֆրիկը խորապես անդրադարձել է այնպիսի թեմաների, որոնք վերաբերում են մարդկային հոգու, սիրո, հավատքի և կյանքի տարբեր կողմերին: Այս ընտրությունը մեզ հնարավորություն տվեց ինչպես հարստացնել մեր գիտելիքները,

այնպես էլ բացահայտել հայ մշակույթի և գրականության հարուստ ժառանգությունը:

Մեր առջև դրված առաջադրանքը լիարժեք ու անթերի կատարելու համար, ընկեր Գևորգյանի հմուտ ու մասնագիտական խորհուրդներին հետևելով, որպես նախագծի հիմնական փուլերից մեկը, այցելեցինք Մատենադարան: Մատենադարանում անցկացրած ժամանակը մեզ համար շատ ուսուցողական էր. այնտեղ զգացինք միջնադարյան մշակույթի շունչը և կարևորությունը մեր ազգային ինքնության համար:

Մեր այցի ընթացքում նկարեցինք հոլովակ, որը ներկայացնում է Ֆրիկի կյանքն ու նրա ստեղծագործությունների կարևորագույն դրվագները: Հոլովակը մշակման ընթացքում դարձավ նախագծի պատկերային մասը՝ մեր աշխատանքի պատմությունը ներկայացնելու նպատակով:

Նախագծի վերջնական արդյունքը դարձավ մեր ստեղծած գիրքը, որը նվիրված էր Ֆրիկի «Գանգատ» բանաստեղծությունը: Գրքում ներկայացված էին ոչ միայն «Գանգատ»-ի տեքստը, այլև բանաստեղծության վերաբերյալ կազմված բառարանը: Գիրքը ձգտում է դառնալ միջնադարյան հայ գրականության և մշակույթի մասին նոր սերնդի համար հասկանալի ու գրավիչ միջոց:

Այս նախագիծը մեզ ոչ միայն հարստացրեց գիտելիքներով, այլև նպաստեց խմբային աշխատանքի և ստեղծագործական մոտեցման զարգացմանը: Ֆրիկի ուսումնասիրությունը մեզ ոգեշնչեց նոր հայացքով գնահատել մեր մշակութային ժառանգությունը և գտնել նոր եղանակներ՝ այն ներկայացնելու ավելի լայն լսարանին:

Նարե ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարանի 10 գ դասարան

ՄԵԾԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Գերմանիայում ուսանելիս, Կոմիտասը 5–10 րոպե ուշանում է դասից: Ներողություն է խնդրում ու ներս մտնում: Զայրացած պրոֆեսորն ասում է.

– Այդ դո՛ւ պիտի սպասես ինչ, և ո՛չ թե ես պիտի քեզ սպասեմ:

Կոմիտասի չեռքերը դողում են և թղթերը թափվում են հատակին: Պրոֆեսորի աչքն ընկնում է թափված թղթերի նոտաներին:

– Այս ի՞նչ նոտաներ են:

– Իմ գրածներն են, – պատասխանում է վախվորած ուսանողը:

– Դե դուրս գնա և այլևս դասի չգաս, որ այլևս քեզ չսպասեմ:

Կոմիտասը դուրս է գալիս ու գլխիկոր հեռանում, պրոֆեսորն էլ՝ նրա հետևից: Քիչ անց Կոմիտասը մի պանդոկ է մտնում, 5–6 րոպե անց, դուրս գալիս: Պանդոկ է մտնում պրոֆեսորն ու հարցնում՝ ո՞վ էր այցելուն և ի՞նչ էր ուզում:

– Մեր մշտական այցելուն է, մի կտոր հաց ու մի բաժակ թեյ է խմում, վճարում ու գնում է:

Պրոֆեսորը շարունակում է հետևել իր ուսանողին: Շուտով մոտենում է մի տան ու ներս է մտնում, պրոֆեսորն էլ՝ հետևից:

– Ո՞վ է այս տղան, ի՞նչ է անում այստեղ,– հարցնում է տղային հետապնդողը:

– Արևելքից է, բայց բոլորովին չի նմանվում նրանց, համեստ է ու կարգապահ, Ժամանակին է մուծում վճարումները: Նրա մոտ շատ հյուրեր են գալիս, երաժշտություն լսելու: Այսքանը:

Պրոֆեսորը բարձրանում է վերև, թակում դուռն ու ներս մտնում: Անակնկալի եկած ուսանողն այլ բառ չի գտնում ասելու.

– Դուք իմ տա՞նը... Որքա՜ն կուզեի սուրճ ունենայի ու Ձեզ հյուրասիրեի:

– Ես ոչնչի կարիք չունեմ, եկա քեզ ասելու, որ այսուհետ, դու կճաշես այս ճաշարանում ու պարզում է չեկը, գրքեր կգնես այս գրախանութից, հագուստ՝ այս մյուսից, ահա չեկերը: Եվ չմոռանաս ամենակարևորը՝ ե՛ս պիտի սպասեմ քեզ, դե մնաս բարով...»:

Ժառանգության հետքերով

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում, ընթացիկ դասերին զուգահեռ, անցկացվեցին ճանաչողական բաց դասեր, որոնց նպատակն էր ներկայացնել հայոց մեծերի գործունեությունը պատմական հայրենիքի սահմաններից դուրս:

Մեկնարկը տրվեց Ալ. Թամանյանին և Կ. Հալաբյանին նվիրված բաց դասերով, որոնց շրջանակներում մեր ժամանակների հայտնի ռուս ճարտարապետ Գեննադի Նադտոչին (ճարտարապետության միջազգային ակադեմիայի պրոֆեսոր, «Ոսկե հատում» մրցանակի դափնեկիր) ևս ընդգծեց այն փաստը, որ հայազգի ճարտարապետներն իրենց հետքը թողել են ռուսական ճարտարապետության մեջ: Կ. Հալաբյանի նախագծերից են Սովետական բանակի թատրոնի շենքը Մոսկվայում (1940 թ.), Սոչիի ծովային կայարանը (1950 թ.), իսկ Ալ. Թամանյանի նախագծով կառուցած իշխան Ս. Ա. Շչերբատովի առանձնատունը գտնվում է Մոսկվայի Նովինսկի բուլվարում: Այն իր գեղեցիկ ճակատային կառույցի համար 1914 թվականին Մոսկվայի Քաղաքային վարչության կողմից արժանացել է առաջին մրցանակի և ոսկե մեդալի:

«Վերածնունդ» դպրոցի հարգարժան հյուրերից էր նաև «Ա. Ի. Միկոյան» փորձարարական-կառուցողական բյուրոյի (այս տարի նշվեց 85-ամյակը) ղեկավարի խորհրդական, ավիացիայի բնագավառում բազմաթիվ գիտական աշխատությունների և գյուտերի հեղինակ, լեգենդար կործանիչ ինքնաթիռների հայտնի կոնստրուկտոր, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս Ա. Ի. Միկոյանի որդին՝ Հովհաննես Միկոյանը, ով դպրոցի սաների հետ կիսեց հոր գործունեության և մեծանուն գիտնականի մասին իր հիշողությունները:

Շարունակելով և գնալով մեր մեծ գիտնականների հետքերով՝ հայ ժամանակակից մասնագետները ևս իրենց ներդրումն են ունենում համաշխարհային գիտական, կրթական, սոցիալական և այլ ոլորտներում: Ուստի զարմանալի չէր, որ դպրոց այցելեցին նաև Երևանից ժամանած թերապևտ, բժշկական գիտությունների թեկնածու Լամարա Մանուկյանը և մանկաբույժ, բժշկական գիտությունների թեկնածու Անահիտ Գևորգյանը: Սկսելով իրենց խոսքը Հերացու թողած ժառանգությունից՝ հյուրերը պատմեցին ինչ մարտահրավերներ ունի այսօրվա հասարակությունը բժշկության բնագավառում, մասնավորապես երեխաները և տարեցները, ինչպես պետք է կարողանան այսօրվա տեղեկատվական դաշտում պահպանել հոգու հանգստությունը և մտքի ճկունությունը:

Նման հագեցած և հետաքրքիր հանդիպումներից հետո դպրոցի սաները ևս գիտակցեցին իրենց առաքելությունը՝ հասկանալով, թե ում հետնորդներն են: Որպեսզի խորհելով հետագա մասնագիտության ճիշտ ընտրության ու հետագա քայլերի մասին՝ կարողանան իրենց ժառանգած նյութական և հոգևոր արժեքները հավուր պատշաճի ուսումնասիրել և հետագայում ավելի զարգացնել:

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց

ՌԱԱՆՈՎԻ ՕՐԱԳՐԻՑ

Մտահոգություններ ապագայի դպրոցի շուրջ

Ներկայիս արագ զարգացող տեխնոլոգիաների դարաշրջանում, երբ նորն ու հինն անընդհատ պայքարում են միմյանց դեմ ու փոխվում, ինձ մի հարց է անհանգստացնում՝ ապագայի դպրոցը և ուսուցչի դերը: Ապագայի դպրոցի մասին մտածելով՝սկսում եմ վախենալ և պատկերացնել մի սառը միջավայր, որտեղ ուսուցչի փոխարեն կարող են ռոբոտներ լինել: Հետևաբար ուզում եմ խոսել ուսուցիչների կարևորության մասին, թե ինչքա՜ն կարևոր ու անհրաժեշտ են նրանք: Ուսուցիչը աշակերտների կյանքում պարզապես գիտելիք փոխանցող չէ, նա, կարելի է ասել, ապագայի ճարտարապետ է, որն իր խոսքով ու գործով քանդակում, ձևավորում է աշակերտների բնավորությունն ու աշխարհայացքը: Նրա դերը միայն ուսուցման սահմաններում չէ, քանի որ նա ամեն դասի հետ աշակերտի մեջ ներարկում է կարևոր արժեքներ, դաստիարակում է նրանց և օգնում՝ բացահայտելու յուրաքանչյուրի ներսում ապրող ներուժը:

Պատկերացնենք, որ դասասենյակում ուսուցիչների փոխարեն ռոբոտներ են հայտնվում: Այլևս դասարանը կդառնա մի աշխարհ, որտեղ սառը մետաղը կլինի «սովորեցնող» ու իր «սառը գիտելիքներով» միայն կկարողանա փոխարինել մարդկային ջերմ հաղորդակցությանը: Դասերը կվերածվեն անհոգի դասախոսությունների, որտեղ աշակերտները միայն լսողներ ու դիտողներ կլինեն և կզրկվեն ուսուցչի հետ հուզական կապից: Այդ ամենի հետևանքով նրանք այլևս չեն հետաքրքրվի դասով, չեն ցանկանա սովորել ու, դասերին սեփական կարծիքը չարտահայտելով, չեն ձևավորվի որպես վերլուծող ու մտածող քաղաքացիներ: Եվ ամենագլխավորը՝ ռոբոտները՝ արհեստական բանականությունները, որքան էլ կատարյալ լինեն գիտելիքի առումով, միևնույնն է նրանք երբևէ չեն կարող հասկանալ մարդկային նուրբ հույզերն ու ապրումները, չեն կարողանա վստահության մթնոլորտ ստեղծել, որտեղ աշակերտը հանգիստ կարտահայտվի ու իրեն ազատ կզգա իր տեսակետներն արտահայտելիս: Այն աշխարհում, որտեղ ռոբոտները կփոխարինեն ուսուցիչներին, սովորելու «կախարդանքն ու գրավչությունը» կկորչեն, չեն լինի այնպիսի ոգևորիչ պահեր, երբ աշակերտը կտեսնի ուսուցչի՝ իրեն ուղղված գոհ ու հպարտ հայացքը: Ի վերջո, չի լինի դժվար պահերին աջակցություն, երբ անհրաժեշտ է չկոտրվել, հավաքվել ու հաղթահարել անհաջողությունները: Ռոբոտները չեն կարողանա աշակերտներին սովորեցնել հասկանալ, ներել, սիրել, սխալներից սովորել, աճել ու զարգանալ. այս բոլորը հատուկ են միայն մարդուն: Այնպես որ, ուսուցիչը միայն մասնագիտություն չէ. ուսուցիչը այն հրաշագործն է, որը կերտում է տեսակներ, որոնք հետագայում դառնում են հանճարներ, և հենց իրենք էլ ստեղծում են ռոբոտներ: Ուստի ուզում եմ ասել. «Հե՜յ ժամանա՛կ, արագ զարգացող աշխա՛րհ, լսեցի՞ր՝ ով է ուսուցիչը. խնդրում եմ, կա՛նգ առ, քանի որ անհնար է ստեղծել մի ռոբոտ, որն այսքանը կկարողանա անել ու դրա հետ մեկտեղ նաև ընկեր լինել աշակերտներին»:

Վիկտորյա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 2-րդ կուրս

Կվերապատրաստվեն նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողները

Մանկավարժական համալսարանը կրկին երաշխավորվել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների վերապատրաստումներ իրականացնելու համար:

Դեկտեմբերի 5-21-ն անցկացվող 90 ժամ տևողությամբ դասընթացին կմասնակցի 50 վերապատրաստվող՝ մայրաքաղաքից և մարզերից:

Խառը՝ առցանց և առերես ձևաչափով իրականացվող վերապատրաստումները կանցկացնի բուհի Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոսական կազմը: Դասընթացները կլինեն նորարարական մոտեցումներով, նախադպրոցական կրթության ոլորտում իրականացվող փոփոխությունների շեշտադրմամբ և փոխներգործուն մեթոդներով:

ՀՊՄՀ Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը վերապատրաստման առաջին օրը ողջունեց մասնակիցներին և պարտավորեցնող համարեց, որ նախապատվությունը տվել են հենց մանկավարժական բուհին:

Նա բարի ընթացք մաղթեց և վստահեցրեց՝ վերապատրաստվողները հնարավորություն կունենան լավարկել մասնագիտական կարողություններն ու հմտությունները: ամենայն պատասխանատվությամբ են մոտենում գործընթացին, դասավանդողներն էլ ոլորտի առաջատար մասնագետներն են, որոնք լավագույնն են նաև հանրապետության մասշտաբով. «Մանկավարժականը տարիներ շարունակ իրականացնում է վերապատրաստումներ՝ տարբեր ուղղություններով: Ուրախալի է, որ գործընթացը տարեցտարի առավել մասշտաբային է դառնում. այդ առումով նաև մեծ է պատասխանատվությունը: Մանկավարժականը հավատարիմ է իր որդեգրած քաղաքականությանը: դասընթացի ավարտից հետո էլ պատրաստ են աջակցել մեթոդական ուղղորդումներով, լսել առաջարկություններ, գործընթացի վերաբերյալ կարծիքներ»:

Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչի պաշտոնակատար Արմենուհի Մանուկյանը նկատում է՝ մասնակիցներից շատերի համար Մանկավարժական համալսարանը հարազատ կառույց է, որտեղից սկսվել են նրանց կրթական և մասնագիտական ձեռքբերումները: Վստահեցնում է՝ վերապատրաստումները կտան անհրաժեշտ հիմնարար գիտելիքներ, կձևավորեն հմտություններ, կարողություններ՝ հասարակության հիմնաքարը դնելու պատասխանատու առաքելությունն իրականացնելու համար:

Դասընթացի մասնակիցներին ողջունեց նաև նախադպրոցական մանկավարժության ակունքներում կանգնած Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի պրոֆեսոր Սվետլանա Մարությանը: Նա գործընթացը կարևոր և անհրաժեշտ համարեց՝ վստահեցնելով՝ կրթության ժամանակակից բարեփոխումները հնարավոր կլինի հաղթահարել նաև վերապատրաստումների միջոցով:

Մարիա ԱՂԵԿՅԱՆ

Ավարտվեցին Մանկավարժական համալսարանում Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված սպորտային խաղերը՝ սեղանի թենիս, հրաձգություն, շախմատ, վոլեյբոլ և ազգային խաղեր մարզաձևերից: Դեկտեմբերի 5-ին անցկացվեց մրցանակաբաշխությունը, ըստ որի գրանցվեց հետևյալ արդյունքներն այսպիսին էին.

Հրաձգություն

Սկզբնական կրթության ֆակուլտետ

Գեղարվեստական կրթության ֆակուլտետ

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ

Սեղանի թենիս

«Էրեբունի» բժշկական ակադեմիա

Օտար լեզուների ֆակուլտետ

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ

Շախմատ՝

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ

ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարան

Վոլեյբոլ

Կուլտուրայի ֆակուլտետ

Գեղարվեստական կրթության ֆակուլտետ

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ:

Ազգային խաղեր

Գեղարվեստական կրթության ֆակուլտետ

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ

Կուլտուրայի ֆակուլտետ:

ԺԱՆՆԱ ՂՈՉԻԿՅԱՆ

Հայի Արյո՛ւնն է իր Անշնագիրը

Ձնջեք մեզ աշխարհի քարտեզներից,
Պատմության պատմական մատյանները
Կրակին տվեք,
Ավերեք հազարամյակների կյանք ապրած
Մեր կոթողները,
Փշրեք ինքնության վկայական
Քարագրերը,
Փոշիացրեք ժայռաբեկորների
Ձեռակերտ, անգամ անձեռակերտ
Պատկերները,
Հոշոտեք մշակույթը,
Քրքջացեք հավատքի վրա,
Խա՜չը ծանակեք...
Հայն իր ինքնության Անձնագիրն ունի,
Դա իր Արյունն է՝ բարկ ու ազնիվ,
Որ դարերն ի վեր, որ դարերն ի վար
Որքան էլ հեղել եք, պղտորել, պղծել,
Չի՜ ծուլվել երբեք ձեր արյունը մերին,
Հայի արյունը չի փոխում երբեք
Գույնը, տեսակը,
Ժամանակների հարահոսի մեջ
Չի փոխում հոսքը,
և այդ հոսքի հետ, և այդ հոսքով,
և այդ հոսքի մեջ ապրում-շնչում են
Մեր քարտեզները,
Քարե՛, երկաթե՛ ու մագաղաթե
Հնչե՜ղ գրերը՝
Որպես պատմություն, որպես շունչ, հոգի
և հիշողություն, որ փոխանցվում է
Ամեն ակնթարթ, ամեն օր, ամիս,
Տարի ու դարեր և ապրեցնում է մեզ
Որպես Հայեր և հայ է պահում,
Հա՛յ Հայրենիքից հեռու
և օտար ափերին կառչած
Ամե՜ն մի հայի...
և եթե անգամ լռել է լեզուն,
լեզուն չի խոսում
Արդեն հայերեն,
Որպես ինքնության վկա Անձնագիր
Արյո՛ւնն է խոսում...
Որքան էլ փորձենք համոզել մեզ
Կամ արդարացնել՝
Սո՛ւտ է, Արյունը ջուր չի՜ դառնում:

ՀՊՄՀ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ-ՎԱՐԺԱՐԱՆ-30

Աննա Ռուբենյանի պեսլականն ու փորձը

Աննա ՌՈՒԲԵՆՅԱՆ. ՀՊՄՀ շրջանավարտ

ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարանի Ֆիզիկայի ուսուցչուհի

-Ներկայացեք, խնդրեմ:

-Ես Աննա Ռուբենյանն եմ: ՀՊՄՀ հենակետային վարժարանի շրջանավարտ եմ և այսօր աշխատում եմ նույն վարժարանում որպես ֆիզիկայի ուսուցչուհի: Համատեղությամբ նաև Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս եմ:

Մեծ հետաքրքրություն եմ ցուցաբերում կրթության զարգացման, նոր մեթոդների կիրառման և ուսուցման մեջ տեխնոլոգիաների ներառման հանդեպ: Սիրում եմ աշխատել երիտասարդների հետ, որովհետև այն ոչ միայն հնարավորություն է տալիս հաղորդել իմ գիտելիքները, այլև ճանաչել նրանց հեռանկարները և նպաստել նրանց զարգացմանը: Կարծում եմ, որ կրթությունը կարևոր է ոչ միայն գիտելիքների փոխանցման, այլև արժեքների և ճկուն հմտությունների ձևավորման համար, որոնք անչափ կարևոր են ինչպես այսօր, այնպես էլ ապագայի համար:

-Ինչո՞ւ հենց ֆիզիկայի բաժին, այդ նախասիրությունն ինչո՞վ էր պայմանավորված:

-Ֆիզիկան ինձ միշտ հետաքրքրել է՝ հատկապես մասնագիտության խորությունն ու բնության օրենքների բացահայտումը: Ֆիզիկան ոչ միայն տրամաբանական մտածողության հմտություններ է զարգացնում, այլև բացատրում է մեզ շրջապատող աշխարհը: Այդ իսկ պատճառով միշտ զգացել եմ, որ սա իմ ճանապարհն է:

-ՀՊՄՀ շրջանավարտ, այնուհետև ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարանի ուսուցչուհի. որքանո՞վ է Ձեզ համար օրինաչափ այս ընթացքը:

-ՀՊՄՀ-ում ուսումնառությունը կարևորվում է ոչ միայն գիտելիքների ստացման, այլև ուսուցչի մասնագիտական զարգացման տեսանկյունից: Բնական է, որ որպես ՀՊՄՀ շրջանավարտ, վերադարձա մեր համալսարանի ավագ դպրոց-վարժարան՝ շարունակելու ուսուցչական աշխատանքը և նպաստելու երիտասարդների գիտելիքների զարգացմանն իմ ընտրած մասնագիտությամբ:

-Քանի՞ տարի եք աշխատում համալսարանական ավագ դպրոց-վարժարանում, դասավանդման ի՞նչ նոր մեթոդներ եք կիրառում հաջողության հասնելու համար:

-Ես արդեն 23 տարի աշխատում եմ այս կրթական հաստատությունում և միշտ փորձում եմ ուսուցումը դարձնել ավելի հետաքրքիր և ներգրավող: Նոր մեթոդներից կարևորում եմ ակտիվ դասընթացները, նախագծային աշխատանքները և սովորողների հետ քննարկումները, որոնք շատ ավելի արդյունավետ են, քան միայն ավանդական դասավանդումը:

-Ի՞նչ հաջողություններ եք ունեցել այս տարիների ընթացքում:

-Այս տարիների ընթացքում բազմաթիվ հաջողություններ եմ ունեցել՝ ինչպես մասնագիտական, այնպես էլ՝ ուսանողական:

2018 թվականին հաջողությամբ պաշտպանեցի թեկնածուական ատենախոսությունը, տպագրվել են իմ ավելի քան 13 գիտական հոդված, 1 ձեռնարկ: Մասնագիտական առումով մշակել եմ արդյունավետ ուսուցման մեթոդներ, որոնք նպաստել են սովորողների մասնագիտական զարգացմանն ու ֆիզիկայի հանդեպ հետաքրքրության բարձրացմանը:

-ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարանում դասավանդելիս ի՞նչ խնդիրների եք հանդիպում և ի՞նչ քայլեր եք ձեռնարկում սովորողների համար առարկան գրավիչ դարձնելու համար:

-Ամենահաճախ հանդիպող խնդիրներից է սովորողների անմիջական հետաքրքրության պակասը գիտության հանդեպ: Այս հարցը լուծելու համար հաճախ օգտագործում եմ ինտերակտիվ գործիքներ, ինչպես նաև իրական կյանքից օրինակներ, որպեսզի թեմաները ոչ միայն առավել հասկանալի դառնան, այլև խթանեն սովորողների հետաքրքրությունը նոր գիտելիքների նկատմամբ:

-Ո՞րն է հաջողության հասնելու Ձեր գաղտնիքը:

-Հաջողության գաղտնիքը համառությունն է, նվիրվածությունն ու անընդհատ նոր գիտելիքներ ձեռք բերելու պատրաստակամությունը: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է գտնի իր առանձնահատկությունները, իր մոտեցումը և լավագույնս մատուցի գիտելիքները, որպեսզի հասնի արդյունքի:

-Որպես համալսարանական ուսումնական հաստատության հոբելյանական տարվա ուղեկից՝ ի՞նչ կմաղթեք Ձեր գործընկերներին և սովորողներին:

-Խորին շնորհակալություն եմ հայտնում իմ գործընկերներին, որոնք անդադար աշխատում են իրենց մասնագիտությամբ և աջակցում ուսումնական գործընթացին: Սովորողներին մաղթում եմ ուսման և գիտելիքների նոր հորիզոններ բացելու քաջություն և հաջողություններ:

-Ինպիսի՞ն եք պատկերացնում ավագ դպրոցի ապագայի տեսլականը:

-Ավագ դպրոցի ապագան պետք է լինի գիտելիքների յուրացման ու անձի զարգացման շարունակական գործընթացի արդյունք: Տեխնոլոգիական առաջընթացն ու նոր մեթոդները պետք է անընդհատ կիրառվեն, որպեսզի սովորողները զարգանալու հնարավորություն ունենան և կարողանան հեշտությամբ մուտք գործել 21-րդ դարի աշխատաշուկա:

-Ուրիշ ի՞նչ հարցերի շուրջ կուզեիք խոսել:

-Այս հարցն ինձ հնարավորություն է տալիս խոսելու այն թեմաների մասին, որոնք այսօր մտահոգում են կրթության ոլորտում և ուսուցման գործընթացում: Անչափ կարևորում եմ այն հանգամանքը, որ կրթական համակարգում ավելի մեծ ուշադրություն դարձվի անհատական մոտեցմանը: Յուրաքանչյուրն ունի սովորելու իր յուրահատուկ ձևը, կարողություններն ու հետաքրքրությունները, ուստի, ուսուցիչները պետք է ունենան հստակ ռազմավարություն, որը կաջակցի յուրաքանչյուր սովորողի անհատական զարգացմանը:

Ավելին, կուզեի խոսել նաև նոր մեթոդների կիրառման մասին, որոնք նպաստում են ուսուցման արդյունավետությանը՝ հաշվի առնելով 21-րդ դարի տեխնոլոգիական առաջընթացը: Օրինակ, թվային գործիքների և ինտերակտիվ հարթակների օգտագործումը, որոնք կարող են բավականին օգտակար լինել ոչ միայն գիտելիքների փոխանցման, այլև ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման գործում: Ավելին, այս տեխնոլոգիաները կարող են օգնել ուսանողներին ավելի հետաքրքիր ձևով սովորել՝ անընդհատ նոր միջավայրերում ներգրավվելով, որի արդյունքում դասերը կդառնան ոչ միայն գիտելիքի փոխանցման ընթացք, այլև փորձառություն:

Եվ, վերջապես, կրթական գործընթացում մեծ նշանակություն ունի ուսուցիչների և սովորողների միջև վստահության հաստատումը: Վստահությունն ապահովում է ավելի բաց և դրական մթնոլորտ՝ ինչպես դասերին, այնպես էլ ամենօրյա շփման ընթացքում: Երբ ուսուցիչը կարողանում է ձևավորել միջավայր, որտեղ սովորողները համարձակորեն հարցեր են տալիս և արտահայտում իրենց մտքերն ու տեսակետները, ուսուցման գործընթացն ավելի արդյունավետ է դառնում: Վստահությունը ոչ միայն ակադեմիական հաջողության, այլև սոցիալ-էմոցիոնալ զարգացման համար կարևոր է, ուստի ուսուցիչները և ուսանողները պետք է լինեն գործընկերներ՝ ոչ միայն միմյանց հրահանգներ տալով, այլև իրար հանդեպ փոխադարձ հարգանքով:

Այս ամենը, կարծում եմ, կարևոր է ժամանակակից կրթական միջավայրի ձևավորման և ապագայի կրթության ռազմավարությունների տեսանկյունից:

Հավելեմ, որ այս պատասխանները պարունակում են իմ տեսլականը և փորձը՝ հիմնված ուսուցման ոլորտում ստացած գիտելիքների վրա:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԷՐ ՆԿԱՐԻՉ, ԳԵՂԱԳԵՏ ԼԵՒՈՆ ԼԱՃԻԿՅԱՆԸ

«Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի նախաձեռնությամբ մանկավարժական համալսարանի բանասիրական բաժանմունքում էր բանասեր, գեղագետ, արվեստաբան Լևոն Լաճիկյանը: Առիթը վերջերս Պոլսո Պատրիարքարանի հովանավորությամբ եւ Պոլսո Հայոց պատրիարք Ն.Ա.Տ. Սահակ Բ. Մաշալեանի հրամանավ լույս տեսած «Պոլիսը՝ հին և նոր» պատկերագիրքն էր:

Ողջույնի խոսքում ՀՊՄՀ հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն Սուրեն Դանիելյանն արժևորեց գեղագետին հյուրընկալելու կարևորությունը և դիմելով չորրորդ լսարանի ունկնդիր ուսանողներին՝ նշեց, որ բացում ենք մեզ համար նոր ու անծանոթ քաղաք՝ Պոլիսը: Պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը ներկայացրեց Լեւոն Լաճիկյանի գրքերը, այդ թվում՝ վերջերս հրատարակված «Պոլիսը՝ հին և նոր» պատկերագիրքը:

Հանդիպումը վարող, հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի գիտական աշխատող Քնարիկ Աբրահամյանը հիշեցրեց, որ ամբիոնի ջանքերով ուսանողներին հաճախ է հնարավորություն տրվում հանդիպումներ ունենալ գրամշակութային գործիչների հետ: Իսկ Լևոն Լաճիկյանի հետ հանդիպումը պատահական չէ. նա նաև բանասեր է: Լևոն Լաճիկյանն իր ասպիրանտական կրթությունը «Գեղագիտություն» մասնագիտությամբ ստացել է ԵՊՀ-ում, նա դոցենտ է և այսօր էլ դասավանդում է Իջևանում, Գյումրիում և փորձում է համահայկական չափումների հասցնել իր արվեստագիտական ընկալումները: Նա հեղինակ է «Անլույս օրերի ոգեղեն ղողանջներ», «Խաչվող ճանապարհներ» ժողովածուների, որոնցից վերջինը գրախոսել է պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը: Ինչ մնում է նոր հրատարակված պատկերագրքին, ապա պիտի նկատել, որ Լաճիկյանը ճանաչում է պոլսահայ աշխարհը, պոլսահայ գրողներին:

Լեւոն Լաճիկյանի և «Սփյուռք» կենտրոնի բարեկամությունը տասնամյակների պատմություն ունի. դրա լավագույն վկայություններից մեկը պոլսահայ խոշորագույն մանկավարժ Հովհաննես Հինդլյանի 150-ամյակին նվիրված գիտաժողովում Լաճիկյանի նկարների ցուցադրումն էր:

Չորրորդ լսարանի ուսանողուհի Նինա Ճուղուրյանի՝ Լաճիկյանի արվեստի մասին Պոլսի «Մարմարա» օրաթերթի խմբագրապետ, արձակագիր Ռոպեր Հատտեճյանի գնահատական խոսքի ընթերցումից հետո ձայնը տրվեց բանախոսին: Նա ներկայացրեց պատկերագրքի ստեղծման պատմությունը, վերհիշեց շնորհանդեսը հայաշունչ Գնալը կղզում: Լաճիկյանը քաղաքերգակ նկարիչ է, և պատահական չէ, որ առաջին հերթին հաշվետու է իր հայրենի քաղաք Գյումրիին: Պատահական չէ, որ պատկերագրքի հայաստանյան ներկայացումների շարքը սկսել է հենց այնտեղից: Ինչ մնում է պոլսական պատկերագծումներին, ապա խոստովանում է, որ բանասեր լինելը նպաստել է Կ. Պոլսի արժեքը առավել լավ հասկանալուն: Իսկ Պոլիսի հանդեպ սերը, ինչպես նկատեց նկարիչը, իր մեջ սերմանել է նաև Սուրեն Դանիելյանը:

Լաճիկյանը մանրամասն նկարագրեց նկարների ստեղծման պատմությունը, շարժառիթները, հատկապես կենտրոնացավ Պոլսին դիմագիծ հաղորդած արքունական ճարտարապետների Պալյան գերդաստանի կառույցների վրա, խոսեց հայկական մշակութային ժառանգության մասին:

Ամփոփիչ ելույթով հանդես եկավ ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը: Նա կարևորեց նմանօրինակ հանդիպումները՝ գնահատելով արվեստագետի բովանդակալից ու համապարփակ ներկայացումը:

Ելենա ԹՈՒՄՈՅԱՆ

ՀՊՄՀ բանասիրական բաժանմունքի չորրորդ լսարանի ուսանողուհի

ԼՈՒՅՍԸ ՊԱՆԵԼԻ ՏԱԿ

Վրեժ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ՅՆՑՈՒՄՆ այնքան ահավոր էր, որ գրեթե ոչ ոք չգտավ իր առաջին անելիքը... Մի քանի վայրկյանում բարձրահարկերը խոնարհվելով գերեզմանոց դարձան: Պանելների ու բետոնի շինվածքների արանքում կենդանի մնացածները չհասցրին անգամ ճչալ: Հրաշքով փրկվածները փորձում էին հասկանալ՝ երա՞զ է, թե... Ով հասկացավ, սկսեց անզոր գոռալ ու մաքրել աչքերը փոշուց՝ աշխարհի վե՞րջն է: Մաքրում էին, բայց լույս չկար, գերեզմանային խավար էր, հույսն էլ գրեթե մեռած...

Միայն րոպեներ անց Արմենը հիշեց, որ ինքը սրճարանում էր, կողքի սեղանին երիտասարդ աղջիկներ էին, ու հանկարծ՝ ցնցում, դղրդոց, խավար: Ընկած էր մեջքին: Շոշափեց տարածությունը, մի կես մետր բարձրության վրա տանիքի պանելն էր: Մի կերպ սողաց, փորձեց ելք գտնել: Ձեռքն առաջ պարզեց ճշտելու՝ տեղ կա՞ շարժվելու: Ափը ինչ-որ փափուկ բանի դեմ առավ, շոշափեց: Կնոջ ոտք էր, տաք, նույնիսկ երակի զարկը զգաց: Ձեռքը շոշափելով վեր բարձրացավ, հպվեց կրծքին, հետո՝ դեմքին:

-Հե՛յ, ո՞ղջ ես թե մեռած,- սարսուռով գոռաց Արմենը և ցնցեց կնոջ դեմքը: Մի քանի վայրկյանից կինը ճչաց. «Էս ու՞ր եմ, ի՞նչ է եղել, դու մա՞րդ ես, թե ուրվական, ինչո՞ւ ենք այս խավարում»:

Արմենը մոլորվեց՝ ո՞ր ինչուին պատասխանի, ինչպե՞ս բացատրի, որ երկրաշարժից ավերված շենքի առաջին հարկի սրճարանում են: Ինչո՞վ օգնի կնոջը գոնե փոքրինչ սթափվելու մղձավանջից՝ թեև ինքն էլ գրեթե նույն մղձավանջի մեջ է: Հիշեց, իր սեղանին երկու շիշ հանքային ջուր կար, գուցե գտնի: Ձեռքը աջուձախ պարզեց, շշերը չէին կոտրվել: Բացեց մեկը, շոշափելով արագ մոտեցրեց աղջկա շուրթերին:

-Քույրի՛կ ջան, խմի՛ր, մի քիչ սթափվիր, որ հասկանաս ուր ես:

Աղջիկը մի երկու կում արեց, փոքր ինչ սթափվեց ու միանգամից գազանի նման ոռնաց. «Մերոնք ո՞ւր են, ես վախենո՜ւմ եմ...»:

-Ողբալը չի փրկի, պիտի մի արանք գտնենք, շարժվենք, գուցե վերևում մեր կանչը լսեն,- աղջկան սիրտ տվեց Արմենը:- Փորձենք սողալով առաջ գնալ:

-Ես անկարող եմ սողալ, մարմինս չի ենթարկվում ինձ,- կմկմոցով ասաց աղջիկը: Արմենը ձեռքով զգում էր նրա մարմնի դողն ու սարսուռը:

-Լա՛վ, դու բռնիր իմ ձեռքից, ես փորձեմ առաջ գնալ,- հույս տվեց Արմենը: Մի քանի մետր սողացին, դեմը պատ է: Հետո հակառակ ուղղությամբ սողացին: Գետնի և պանելի արանքը ավելի էր նեղանում, իսկ փոշու ծանր հոտը խեղդում էր:

-Մի քիչ ուշքի գանք և ուրիշ ելք մտածենք: Գուցե ինչ-որ չոր բանով պատին հարվածեմ, ձայնը վերևում լսվի:

Մի բետոնի կտոր գտավ, երկար հարվածեց պատին: Երկուսով միասին գոռում էին՝ «Օգնությո՜ւն, օգնությո՜ւն»: Ոչինչ չէր լսվում, և լռությունն ավելի ահեղ ու ծանր էր դառնում: Արմենը փորձում էր մղձավանջից հանել աղջկան, բայց հուսադրող ասելիք չուներ:

-Քո՛ւր ջան, անունդ ի՞նչ է, ո՞վ ես դու,- փորձեց խոսակցությամբ մեղմել տագնապն ու անորոշ սպասումը:

-Անունս Աստղիկ է, բանասիրական ֆակուլտետի ուսանող եմ,- արցունքների միջից հազիվ խոսեց Աստղիկը: -Ախպե՛ր ջան, բա քո անունն ի՞նչ է, դու ո՞վ ես:

-Անունս Արմեն է, ես ժուռնալիստ եմ,- կողքի շրջվեց Արմենը և հանքային ջրի շիշը կրկին մոտեցրեց Աստղիկին:- Մի քիչ էլ խմիր՝ կոկորդիդ փոշին մաքրվի:

Աստղիկը դողում էր: Արմենը ավելի մոտեցավ, ձեռքով գրկեց Աստղիկի գլուխը: Արցունքից դեմքի փոշին ցեխ էր դարձել, կոպերն ու թարթիչները հազիվ էին շարժվում: Արմենը թրջեց իր թաշկինակն ու շոշափելով մաքրեց աղջկա աչքերը՝

-Դիմանա՛նք, ոնց լինի՝ մեզ կգտնեն՝ միայն թե հանկարծ պանելը չիջնի:

Հնարավոր փլուզման սարսափից Աստղիկը պինդ սեղմեց Արմենի ձեռքն ու ակամա գլուխը դրեց նրա կրծքին: Հույս էր որոնում: Արմենը իր փոշոտ կրծքին մի քանի անգամ զգաց արցունքի խոնավությունը: Ժամեր անցան, ոչ մի ձայն չէր լսվում վերևից, փլվածքի շերտը հաստ էր: Անորոշության մութ սարդոստայնում թպրտում էր հույսը: Կողքերից հողի շերտ չկար, որ գոնե ձեռքերով փորեն... Միակ տարբերակը

կարծես թե սպասելն էր, լավ է, որ գոնե երկու շիշ հանքային ջուրը կա, իսկ Արմենի գրպանում՝ ընդամենը երեք շոկոլադ: Անհույս գալարումներից, ցավից ու խավարի սարսափի տագնապներից Աստղիկը հոգնել էր, կոպերը դանդաղ իջան: Արմենը չէր շարժվում, ձախ ձեռքը նրա գլխատակին էր: Աղջիկը թեև հոգնած, բայց համաչափ շնչում էր: Անծանոթ աղջկա ծոցի անսովոր, բայց հաճելի հոտն ու կրծքի տաքությունը Արմենի միտքը մեկ-երկու վայրկյան ակամա շեղեցին: Չհասկացավ՝ խղճահարությունի՞ց էր, գուցե իր մենակությունը փարատելու անորոշությունի՞ց, ամեն ինչ կորցնելու սարսափի՞ց, թե ինչ-որ անհայտ բանից Աստղիկին համբուրելու ցանկություն ունեցավ: «Դա անպայման հույս, ուժ կտա Աստղիկին»,-ինքն իրեն համոզեց Արմենը, բայց նույն պահին ամոթ զգաց, որ ինքն իրեն խաբում է: «Մի՞թե այսպիսի մղձավանջից ու մահվան տագնապից ավելի զորեղ ուժ կա: Բայց այս անօգնական աղջկա անզոր ներկայությունից կարծես ուժեղանում եմ»,-անթափանց խավարում շիկնեց Արմենը և գլուխն այնքան մոտեցրեց Աստղիկին, որ ավելի մոտիկից զգա կրծքի անդիմադրելի բույրն ու ձգող տաքությունը: Պանելի ու կրծքի արանքում գլխապտույտ սկսվեց, մի ինչ-որ թաքուն ուժ մեղմում էր մահվան սարսափը: Խավարը լիքն է առեղծվածներով: Միայն ժամեր անց արթնացավ աղջիկը՝ ինչ-որ մեկի ձեռքն իր գլխի տակ: Անմիջապես հիշեց, չհասցրեց ճչալ ու գլուխը չհեռացրեց: Չհասկացավ՝ վախի՞ց չհեռացրեց, թե՞ տղամարդու փրկարար մոտիկությունից, գուցե հույսի ջերմությունի՞ց կամ... Այդ կամի վրա սիրտն անսովոր խփեց. «Չէ՛, սրտխփոցը ոնց որ թե մղձավանջից չէր, մի ուրիշ բանից է՝ անծանոթ, անսովոր, բայց երանելի...»:

-Արմե՛ն, սարսափս ոնց որ թե մի քիչ մեղմացել է, միայն թե ահավոր տագնապում եմ՝ մի՞թե չեն հասցնի մեզ կենդանի գտնել:

-Լաց չլինե՛ս, որ գոնե կարողանանք վերևից ձայներ լսել,- հույս տվեց Արմենը՝ գրկելով Աստղիկի գլուխը: Մի տաք դող անցավ Աստղիկի մարմնով՝ «Ես ոչ մի տղամարդու այդպես մոտիկից չեմ զգացել՝ վախից ու տագնապի՞ց է, թե... էս ինչքան թե կա մղձավանջի մեջ, գուցե նաև լո՞ւյս էլ կա»: Բայց հասկացավ, որ պանելի տակ անծանոթ տղամարդու շնչառությունը ապրելու ցանկությունն ու հույսը ավելի ուժեղացրեց: Հատակին թափված բետոնի փշրանքներից ու դեկտեմբերյան ցրտից պաղ հատակը դող բերեց նրա մարմնին: Իրենց վերարկուները հանդերձարանում էին մնացել: Քիչ անց դողն ավելացավ ու խառնվեց անսովոր զգացողությանը: Խավարի անհայտ լռության մեջ դողահար աղջկա ատամնախփոցը սթափեցրեց Արմենին:

-Աստղի՛կ, ուրիշ ելք չկա, ես շրջվեմ մեջքի վրա, դու մի կերպ հարմարվիր իմ մարմնին, որ հատակի բետոնի սառնությունը մարմնիդ չանցնի,- ասաց Արմենը ու զգաց, որ Աստղիկը մթի մեջ շիկնեց, փորձեց հրաժարվել՝ իբր իրեն բեռ չլինելու համար: Արմենը օգնեց: Աղջիկն անսովոր ամոթխածությամբ պարզապես մտավ տղայի տաք գիրկը: Թեև անթափանց մութ էր, բայց Արմենը աչքերն ավելի լարեց՝ կարծես ուզում էր խավարում տեսնել կուսական կրծքի լույսը, աչքերի փայլը: Տղան փորձում էր իրեն զսպել, բայց մի ներքին երանություն արդեն արթնացել էր մեջը: Նա կարողացավ միայն միտքը զսպել, բայց սիրտը ոնց որ թե չի ենթարկվում: Անսովոր զգացում էր, մի՞թե մղձավանջում... Մթի մեջ իրենց շուրթերն իրար երկար չորոնեցին... Սարսափը հրաշքով մի պահ ցնդեց, իսկ պանելի հնարավոր փլուզումը արդեն մոռացել էին: Անհույս խավարում գալարվում էին ու շուրթերով իրար հույս տալիս: Համբույրը փրկություն էր, հույս, հավատ, սեր: Ու կառչել էին նրանից: Հետո եղավ անխուսափելին... Ոչ մեկը ոչ մի բառ չասաց, այդպես ժամեր մնացին, կարծես մոլորեցնում էին մահվան ուրվականին: Մի՞թե մահվան սարսափին հաղթող ուժ կա...

-Արմե՛ն, ես պանելից այլևս չեմ վախենում, միայն թե երկուսով լույսը տեսնենք,- շշնջաց Աստղիկը շատ կամաց. կարծես քիչ այն կողմ իրենց լսող կար:

-Աստղիկ՛, պանելի տակ ես փրկության լույսն արդեն գտել եմ,- նույն շշուկով պատասխանեց Արմենը: Հենց այդ լույսը մեզ փրկելու է, նա զորեղ է, մեզ ուժ կտա դիմանալու, նա չի մեռնում:

-Արմե՛ն, պատկերացրու՝ մենք փրկվել ենք ու ինչ լուսավոր զավակ ենք ունենալու:

Երկուսով մոռացել էին երկրաշարժն ու պանելը: Արթուն երազի երանության թևերին՝ նրանք արդեն ծննդատան մոտ էին: Արմենը հայրաբար բարձրանում էր ծննդատան աստիճաններով՝ ձեռքին կարմիր վարդերի մեծ փունջը: Աստղիկը նորածնի բարուրը գրկին՝ նորաթուխ մոր հպարտությամբ մոտենում էր Արմենին՝ «Անունը ի՞նչ դնենք: Առավոտյան նա կարթնանա ու գղգղոցով կլցնի մեր տունը, ինչ լուսավոր տուն ունենք...»:

Հանկարծ պանելը ցնցումից մի փոքր իջավ, ու ցնդեց երանելին: Երազում արդեն մայրացած Աստղիկը զավակին կորցնելու սարսափից պինդ գրկեց հայրացած Արմենին. «Գոնե այսպես հաղթենք մահին»:

-Մի վախեցի՛ր, փրկվելու ենք, մենք զավակ ենք ունենալու,- հույս տվեց Արմենը՝ լարելով լսողությունը:

- Եթե մեզ չգտնեն, գոնե մի քանի օր էլ անիծյալ պանելը չիջնի: Ես պանելի տակ մի ամբողջ կյանք ապրեցի: Հա՛, Արմե՛ն, արդեն քանի՞ օր է...

-Ոնց որ թե երրորդ օրն է: Գրպանիս վերջին՝ երրորդ շոկոլադը կեր, ուժերդ հավաքիր, դիմացիր, մեզ փրկելու են:

Աստղիկը երրորդ շոկոլադը կիսեց, գրեթե զոռով կեսը դրեց Արմենի բերանը: Չծամեցին, որ քաղցրությունը երկար մնա: Հանկարծ պանելը կրկին ցնցվեց ու մի քանի սանտիմետր էլ իջավ: Հույսի թելը բարակել էր և ուր որ է կտրվելու է: «Մի՞թե մեր լուսավոր երազը կմնա սառն ու անշունչ պանելի տակ, մի՞թե մեր փոքրիկին չենք տեսնելու, ...մի՞թե...»,- գրեթե հուսահատ դողում էր Աստղիկը: Կրկին մռայլվեց լռությունը ու պանելից ավելի ծանր դարձավ: Մի՞թե պանելի վերևում կյանք չի մնացել:

-Աստղի՛կ, վերևից փրկարարների շան հաչոց եմ լսում, նա մեր հոտն առել է, մի քիչ էլ դիմացիր,- հանկարծ ճչաց Արմենը: Քիչ հետո փրկարարների ձայները լսվեցին՝ «Է-հե՜յ, եթե ողջ եք, մի քիչ դիմացեք»: Անակնկալ փրկության հույսը կարծես երազ էր, կարկամել էին, վախենում էին գոռալ, որ հանկարծ չցնդի երազը՝ գոնե մի քիչ էլ այդ հույսի մեջ ապրեն: Բայց վերևի ձայներն ավելի ուժեղացան, և փրկարարների գործիքի զգույշ հարվածից մի փոքրիկ անցք բացվեց: Լույսը ներս խուժեց, ու անցքը մեծանում էր: Հետո վերևից մեկը գոռաց՝ «Ձեռքդ տո՛ւր»:

-Աստղի՛կ, առաջ դու գնա, ձեռքդ անցքից պարզիր,- ասաց Արմենը՝ հրելով Աստղիկին դեպի փրկարար անցքը: Երկու հոգի ուշագնաց Աստղիկին դուրս քաշեցին, դրեցին պատգարակին: Շպապօգնության մեքենան անմիջապես տարավ մոտակա սանիտարական վրան: Փրկարարները փորձեցին անցքը լայնացնել: Ցնցումից հանկարծ պանելը մի քանի սանտիմետր իջավ, շարժվելը գրեթե անհնար էր: Մետաղե հենակներ հրեցին պանելի տակ, որ լրիվ չիջնի: Անցքը շատ էր նեղացել, հնարավոր չէր դուրս քաշել Արմենին: Մուրճով ու կացնով պանելի եզրը մի փոքր կոտրեցին: Արմենը մի կերպ ձեռքը անցքից պարզեց փրկարարներին:

-Էդ կնոջը տեղ չտանե՛ք,- գոռաց Արմենը պանելի տակից:

Մի քանի րոպեից Արմենին մի կերպ դուրս քաշեցին պանելի տակից, ու նույն պահին էլ մետաղե հենակները ծալվեցին: Պանելը մի վայրկյանում շրխկաց հատակին:

-Ու՞ր է այն կինը,- հազիվ շշնջաց Արմենը:

-Նրան ուղարկել ենք վերակենդանացման, գուցե մայրաքաղաք կտեղափոխեն կամ էլ Հայաստանից դուրս,- հանգստացրեց փրկարարը:

-Հիմա ու՞ր է, հասցե՛ն ասեք,- թախանձանքով խնդրեց Արմենը՝ հրաժարվելով պառկել պատգարակին:

-Ախպե՛ր ջան, էս քաղաքում հիմա հասցե չկա, ավերակների կույտ է,-բացատրեց փրկարարը:

-Ինձ մի՛ տարեք, պառկեցրե՛ք էս անհասցե պանելին, նա անպայման տուն կվերադառնա,- համառեց Արմենը:

-Նա քո կի՞նն է, հետո որոնող ծառայությունով կգտնես:

-Այո՛, իմ կինն է, բայց ես նրա ազգանունն ու հայրանունը և նախկին հասցեն չգիտեմ:

Փրկարարները տարակուսանքով իրար նայեցին. «Քանի՞ տարվա ամուսիններ եք, ո՞ւր և ե՞րբ եք ամուսնացել»:

-Երեկ, պանելի տակ...

Դեկտեմբերյան սառը օդում արցունքի մի քանի կաթիլ ծաղկեցին արևի ջերմությամբ և փշրվեցին պանելի սառը բետոնին:. Քիչ հեռվից մի ձայն սրատեց լռությունը՝ «Արմե՛ն, մենք լույսը տեսա՜նք»...

Փրկարարները պատգարակով Աստղիկին էին բերում: Բոլորը անշարժացել էին: Թեև երեք օրում վիշտը քարացել էր բոլորի դեմքին, բայց մի թեթև ժպիտ խառնվեց օրվա ցավին ու մտավ պանելի տակ: Պանելն արդեն նոր տուն է, ավերակ քաղաքի առաջին հասցեն...

Դեկտեմբերյան սառնամանիքին պանելի տակից տաք լույս էր բարձրանում...

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ